

**5.9. Պարենային ապահովություն<sup>21</sup>**

Ծրագրով նախատեսված սույն ենթահատվածի թվով 2 վիճակագրական աշխատանքների (590001 և 590002 ծածկագրեր) կատարումն ապահովվել է սահմանված ժամկետներում և պարբերականությամբ:

Հավաքագրվել, մշակվել և ամփոփվել են պարենային ապահովության վիճակագրությանն առնչվող մակրոտնտեսական, սոցիալական ոլորտի, գների և գների ինդեքսների, գյուղատնտեսության, ագրոօդերևութաբանական տեղեկատվության, պարենամթերքի արտաքին առևտրի և տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների աղքատության վերաբերյալ ցուցանիշները:

Հաշվի առնելով միջազգային կազմակերպությունների փորձագետների և հանրապետության շահագրգիռ կազմակերպությունների առաջարկություններն ու դիտողությունները՝ վերանայվել և փոփոխվել է «Պարենային ապահովություն և աղքատություն» վիճակագրական տեղեկագրի կառուցվածքն ու բովանդակությունը:

Հիմք ընդունելով միջազգային կազմակերպությունների կողմից ընդունված չափանիշները, կազմվել են 2003թ. առանձին ապրանքախմբերի և ազգային պարենային հաշվեկշիռները:

Իրականացվել են ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության կողմից ստեղծված պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի համար տեղեկատվության հավաքագրման, ստուգման, ծածկագրման, մուտքագրման և վերոհիշյալ կազմակերպության [www.fsdatabase.org](http://www.fsdatabase.org) ինտերնետային էջում տեղադրման աշխատանքները:

ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության փորձագետի այցելության ընթացքում աշխատանքային քննարկումներ են կազմակերպվել ՀՀ ԱՎԾ ստորաբաժանումների, շահագրգիռ գերատեսչությունների ու կազմակերպությունների աշխատակիցների հետ, որոնց արդյունքների հիման վրա վերանայվել և ընդլայնվել են պարենային ապահովության ոլորտի տվյալների բազայի որոշ խումբ ցուցանիշները:

Մասնակցություն ունենալով հանրապետությունում բերքի կանխատեսման մշտապես գործող աշխատանքային խմբի աշխատանքներին՝ համաձայն սահմանված կարգի և ժամկետի, խմբին է ներկայացվել պարենային ապահովության ոլորտի տեղեկատվություն:

---

<sup>21</sup> *Տես՝ Ծրագիր, Հավելված I:*